

սութեան շառաւիղը անկարող է թա-
փանցել:

թիծերն իսկ զոր կը նշմարենք այնպէս
փախստական են, իրենց ցոլացուցիչ կա-
րողութիւնը այնքան իիստ է, որ աստե-
ղաջնները ինչպէս Փայլածուի համար
կը վիճն դեռ իր թաւալականութեան
տևողութեանը վրայ:

Յարգենք գաղտնիքը որով կը շրջապա-
տուի փայլուն հովուի աստիր (Աստղիկը,
Գիշերավարն), և հետեւինք մեր լուսաւոր
ճառագայթին, որ այս անգամ զմեզ կ'ա-
ռաջնորդէ Երկրին վրայ:

(Շարութակինել)

Թարգմ. Հ. Խորեն Սևան

ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿՆԵՐԸ



Մեր քաջակորով Արշակ Բ. թագա-
տրը, երեսուն տարիներ զիւանագիտու-
թեամբ և քաջութեամբ երկու հօգոր թա-
գաւորներ խաղցուց և պաշտպանեց իւր-
սամանները: Վասակ Մամիկոնին կար-
ճահասակ զօրավարը, առիծի պէս թա-
թերը զրած երկու սարերու լանջերուն,
Պարսից և Հոռոմոց, որուն վրայ որ յե-
նոյր, գէա ի գետին կը տապալէր, յաղթող
ըմբիշ մ'էր որու պատեն գետին չէր
տեսեր: Մակայն մի օր, նման բան մը արդի
Քօլեկիութեան, մուտ գուա Հայ բանակի
մէջ, ակսան սորորել, գաղտագողի թողել
լքել ճակատն և փախել, երկարատե
պատերազմն ատելի ըրեր էր կոփոր, և
ցանկալի՝ հանգիստը: Արշակ և Վասակ
մացին միայն, բայց երկուքի անոնը զեռ
սուկումն կ'ազգէր Պարսից, ուստի գա-
ւաճանութեամբ որսացին և Հայ իշխա-
նագուններէն կամակից եղան իրենց թա-
գաւորի մատնութեան: Արշակ Շապուհի
զերին էր Վասակ կալանաւոր դրան աշխա-
Շապուհ կը զգար գործուած վատութիւնը,
և աշխարհի դատաստանի առջև ուզեր
որ իմացուի բարեկամութեամբ խարուած
թագաւորի կեանցին դարան գործելը, կը
խցէր անոր գերութեան վրայ բայց ար-
ձակել չէր ուզեր: Գեղեցիկ Հայաստանը
գրաւել էր միրուր, Ուստի հրապարակաւ
իրը դաւաճան մը հաւաստելու համար

Հայոց թագաւորը, զիմեց կախարդու-
թեան: Հող բերել կու տայ Հայաստանէն
և կը փոէ իւր այգորելի տաճարին յատակի
մէկ մասի վրայ: Ապա թանկագին գոր-
գերով կը ծածկէ զահճի յատակը, ճոխ
խորտիկներով և ազնիւ զինիով վայելած
սկզբանէն վերջ, Շապուհ Արշակի հետ
թեթէի մտած կը սկսին ճեմել վեր ու
վար: Երբ Հայ հողի վրայ կը բայլեն,
Արշակ ելեկորական հոսանքէ մը ցնցուածի
պէս կ'երերի կը զողցոչէ մարմինն, մա-
զերն կը զիգուին զվարուն վրայ, բարկա-
ցայտ աչշերով կը մռնչէ Շապուհ երեսն
ի վեր: Շապուհ անհաղորդական մարմնոյ
ցրութեամբ, առանց այլայլեռու կը տանի
ընկերը Պարսիկ հողի վրայ: Կախարդա-
կան հոսանքը կը կտրի, Արշակ խամրած,
թօշած գոռոզին աղերարկու կը զանայ
իրեք սարուկ և գերի: Շապուհ երկիցս և
երիցս փորձելէն զկնի, գոհ սրտով կը
նայի իւր պալատականաց երեսն. և նա
հասեր էր իւր նպատակին: փորձով հա-
ւաստեց թէ Արշակ թշնամի էր իրեն և
վասապարտ Պարսից Տէրութեան: Կրա-
մայուեցաւ փակել Անցուշ բերդի մէջ:
Խակ Հայաստանը բաժին ինկաւ երկու հա-
կառակամարտ Տէրութեանց, որոնք եր-
կուստեղ Պէլէննակից էին Հայոց թագաւո-
րութեան:

Արդեօք սիսալած պիտի ըլլամ, եթէ

չորրորդ զարու պատմական նորավէպ մը հանդիպցնենց քանի հրորդ զարում Ասա թէմոյի մէջ տեղի ունեցած տանօրեայ եղեռներգութեան (դրամային), որու մէջ զոհ գնաց Միացիալ Հայաստանի անկախութիւնը, Հայկական չորս նահանգներու և կիլիկիոյ անջատումն և ստարացումն, Այս ողբերգութիւնն խաղուեցաւ երկու արարուածով երկու տարբեր հոգերու վրայ:

Լուսունի նստաշրջանին՝ Գերագոյն Խորհրդը՝ Հայաստանի հողի վրայ գտնուածի պէս, Հայկական պետութեան սահմանները նպաստար կերպով գծելու հարկն զգաց, Հոն հասարակական կարծիքը իւր բարերար ազգեցութիւնը ունեցաւ Գերագոյն խորհրդի վրայ, ուր Դաշնակից ազգի մը համար, հանդէպ հասարակաց թշնամիին, Թուրքին, յանուն իրաւունքի և արդարութեամ կը պահանջէին որ արզարացի լուծծումն արուի Հայկական Հարցին և Հայ ազգին, որ Դաշնակիցներու համար համեմատաբար՝ աւելի զոներ տուած էր քան շատերը և տուած զոհի համեմատա ալ արդինց ունեցեր էր վերջնական յաղթութեան մէջ: Եթէ երկրի մը միահամուռ լրագործիւնը, հասարակական կարծիքի թարգմանն է, կրնանը ասել որ Անզիւական ժողովութիւնը ընդունելի եղած էր Գերագոյն խորհրդունքին, լուսունի մէջ, որուն միւս զաշնակիցներն ալ հաւանեցան, համաձայնեցան և ըրին իրենց որոշումները: Այդ Պաշտօնական նիստը, որ Հայոց ամեմանները գծելու զբաղած էր իւր որոշումն կայացնելէն վերջ, իրաւունք և արդարութիւնը կը պահանջէին Գերագոյն խորհրդին, որ իւր որոշմանը վրայ հաստատուն մար: Բայց այդպէս չեղաւ:

Թուրքիոյ սահմաններն որոշելու համար, Գերագոյն Խորհրդունք որոշեց գումարուիլ Ասա թէմոյ խալական հողի վրայ: Արզիւնքը ցոյց տուաւ որ զիւանագէւներու ուրի տակ, առաս Թուրքի հող զրուած էր: Հոն մոռացութեան արուեցաւ քաջարի դաշնակիցը, անոր սեփական հայրէնի գա-

ւանները, որոնք ոչ պակաս նուիրական էին քան զիւզաւ և լորին, քան զմիւումէ, Զարար, Սեբենիկոյ, մեզի համար, և իրաւունք և արզարութիւնը կը պահանջէին ազատել զանոնց դարաւոր թշնամոյ ձեռքչն և կցել մայր երկրի հետ: Թուրքասիրութիւնը իւր գագաթնակէտին հասաւ խալիոյ մէջ, Նիտուի պատրաստած դիրական հողի վրայ: Խալական լրագիրները շփոթեցին իսկական բարեկամը և զաշնակից Հայը, անոր թշնամոյն՝ բարբարոսի, Թուրքի հետ: Գաղղիոյ համար մէկ Պիէտ Լոսի մը շատ է Կ'րսէն: Խալիայում տասնեակներ կարելի էր համրել: Ի՞նչ բանի վերագրել այս քաղաքական յունշը ութիւնը, հաւառակ զինադադարի առաջին ամիսներուն, երբ խալական դաշնիճը բոլորովին համակիր Հայ զատին և Խորհրդարանի մէջ 200 է աւելի երեսփոխաններ իրենց անկեղծ համակրութիւնը և աջակցութիւնը յայտարարեցին Հայաստանի պատութեան և անկախութեան համար: Նոյն իսկ խալիոյ առաջին բանատեղծը, Գարբիէլ Դ'Անոնցիոյ, Ջիումէի հերոսը, ակրաները կը ճանացնելով այն Տէրութեանց դէմ որոնց չին համաձայներ Ջիումէն խալալիոյ բողով, կը սպառնար համենել օգնութեան իւր եղացիներով ազատել զիրլանատա, զեղիպտոս, Միջազեւը, Պաղեստին և Փոքը Ասիրի մասերը յափշտակոյներու ձեռքչն և վերադարձնել բարեկամ հաւրստահարուած Թուրքին: Իսկ Հայոց և Հայաստանի համար և ոչ մի խօսք: Անշուշտ մեծ բանատեղծն ալ համոզուած էր ինքէրի, Քէմալի և այլոց այի արտցունենքներուն թէ յափշտակող, զրկող, Զարդարաներն Հայերն եղած են: Իսկ բարի, մարդասէր և զարգացած Թուրքը զոհ եղած Հայկական բարբարութեան:

Վարչապետ Նիտուի ի նուիրական գրայ կը ծանրանայ նաև կիլիկիոյ վերջին ջարդերու պատասխանատութիւնը, որուն համամիտ երկցան իրենց լուութեամբ, ամենայն լրագիրներն, որոնցմէ մին միայն բողովը ըրաւ այդ իմշգութիւններու դէմ, որ գործուեցան հակառակ զինադադարի պայ-

մաններուն՝ որուն պահպանութեանը պարագաւրեալ էր նաև իտալիա, և չուզեց իրաւունքը և արդարութիւնը յարգել տալ:

*

Իտալիա յառաջ և յետոյ Համաշխարհական պատերազմին՝ անհաջող աշբով կը զիտէր Յունաստանի մեծնալը, որուն կը նպաստէր յայտնի կամ քողարկուած Գաղղիոյ քաղաքաբականութիւնը։ Այդ ասեւութիւնն կրկնապատկեցաւ և եռապատկեցաւ, երբ Դաշնակիցները Զմիւնիա Յունաստանին անցուցին։ Աւստի Յունաց յառաջ խաղացութիւնն Փոքր Ասիոյ մէջ կասեցնելու համար, իտալիա Աստալիայէն Գոնիա գաւառամասերը զրաւեց, որով ուղղակի հաղորդակցութեան հետ կը մտնէր Թուրք ազգայնականներու հետ, և թշնամութիւնն երթալով յայտնի կը դառնար երբ Թուրք և Յոյն բանակներու միջն ընդհարութիւնը տեղի կ'ունենային։

Եւ որովհետեւ Հայերու և Յոյներու յարաքերութիւնն շատ լաւ էր և կիրպ մը համաձայնութեան կու գային իրարու հետ քոյր ազգերը, իրենց հայրենիքը Թուրքէն ազատելու Հայաստանի և Պոնտոսի մի քանի գաւառներ պիտի կցուէին Հանրապետութեան տիրապետած երկրի հետ, որով Աև ծովի վրայ Տրավիզն և Միջներկականի վրայ Ատանայ-Մերսին քաղաքները կը պահնաջէին Հայերը, ազատ ելք մը նաւահանգիստ մը ունենալու համար որուն կամակից և օգնական էր Մեծ քաղաքէտն Վենիենի կրտսացին, այն ժամանակ իտալիա պաղեցաւ մեզէն և Թուրքն իտալիոյ նեղ զրութենէն օգտուելով, հասկացուց որ տնտեսական միջոցներ շնորհելու պատրաստական է՛ր ու Հերակլիայի Սև ածուլը կը խոստանար անոր արամաղրութեան տակը դնել, եթէ իտալիա նոյն զգացմունքներով կերարերուէր դէպի ի Թուրքիա Գերազոյն խորհուրդի ՆԱԽՏԵՐՈՒ մէջ, իտալիոյ ԵԱՀԵՐԸ, ինչպէս ասեր էր հեղինակաւոր անձնաւորութիւն մը, կը բռնադատէր զնիտի նախարա-

բապետը Սան Ռիմոյի Համագումարի մէջ գոհնել Հայաստանի Անկախութիւնը և ազատութիւնը Թուրքի սեղանի վրայ:

Մի ենոյն ժամանակ իտալիա ալ Գաղղիոյ հաւասար՝ աշջ ունէր դաշտային կիլիկիոյ վրայ, և Տիտոտնի այդ գրութիւնը պաշտպանողն եղաւ իրենց Գաղութային ժողովարանին մէջ և հակառակ Հայաստանի անկախութեան բուէարկութիւն մ'ալ տեղի ունեցած է. հակասելով կանխաւ Վարչապետութիւնը Օրլանդոյի արտասանած խօսքերուն թէ կը իւրացնէ Հայաստանի անկախութեան հարցը իտալականին հնոտ, որուն համաձայնութեան բուէ տուած էին խորհրդարանի երկու հարիւրէն աւելի պատգամաւորներ։ Պաշտօնական հրատարակութեան մէջ յիշածն Հայոց միջազէպն ջնջուեցաւ։ Ասոնց մոոցուած բաներ էին, և յիշելու հարկ չկար, եթէ Հայերն՝ այս անզամալ ՑԱՂԹՈՒՂԴԱՀՆԱԿիցներու շահագիտական զաւերուն զոհ չ'երթային։ Ասոր պատճառը հետեւեալներն են ըստ մեզ։

Գաղղիա, Անզդիոյ ճնշման տակ երկու կրելով որ կրնայ Ալրեան կորունցնել, լեց կիլիկիա, և զրամատէրերու ճնշման տակ, ոսկի Հորթին երկրպագու Միլլըրան, դաւաճան և թշնամի Թուրքին բարերարել ուզեց և սուրբ զարձուց Հայու սրտին։

Իտալիա նոյնպէս Լոյս Ճէործի թելերու մէջ բռնուած կը կորունցնէր Ալրանիան և մանաւանդ Փոքր Ասիոյ ծովեզերքներն Զմիւնիա քաղաքով։ Հայաստանին յոյս և շահ չունէր իտալիա, և ոչ Հովանաւորութեան գործի մէջ, վասն զի իտալական ճառախօսներ հասկացուցին թէ Հայը՝ արթուն ճարտար և շուտ զարգանալու ընդունակ ազգ մը ըլւալով, իտալիա պիտի ստիպուի հրաժարի շատ շուտով, ուստի այնպիսի երկրի մը հետ գործ սկսելու է որ երկար տարիներ (և զարեր) անբնդունակ լինի զարգանալու, և գտան Թուրքը։ Երկու լատին ցեղի քոյր ազգերը, Անգլիական միազգիւասետութեան ուժերուն հակակշեռ մը ստեղծելու համար, նախընտրեցին Թուրքը վերականգնել իւր հին սահմաններու մէջ։ Ջենց սիալիր եթէ պնդենց

որ այդ ուղղութեամբ սկսան զինել և սպասագինել թուրք Միլլիճիները, և կը սուկանը մտածելով թէ Մարաշի, Զէյթունի մէջ իտալական զինարաններու ծախած հարիւր հազարներով հրացաններու զնդաններէն գետին տապալեցան շորջ քսան հազար Հայեր։ Սակայն խորագէտն Ալրիոն, որ ուշադրութեամբ կը գիտէր բուրկի քաղաքագէտներու շարժումներն, կինեց աչքերը, չտևսնելու զարնելով անոնց անխոնեմ արարքներն մինչև զրական արդինքի մը երենալը. հարկ չէ թէ իւր նպատակի յաջողութեան համար զոհուին դարձեալ անմեղ Հայեր։ Արդ մինչ կիլիկիոյ Հայոց ջարդերով լատին դիւնագիտութիւնը կ'երազէր Միլլիճիներու և Ալրաբներու միացումն, օգտուելու համար այդ մութ ուժերով Անգլիոյ դէմ, մէկ ոստամամբ Միլլիճերուն երեցա Վլոսփորի ափերու վրայ։ Կ. Պոլիս գրաւուած էր Անգլիական նաւատորմիով և իւր իտարածակ Տէր իւր հրամանները կատարել կու տար։ Գաղղիա և Խտալիս զարմանցով նայեցան զաշնակցի երեսը, և առանց պատասխանի հասկացան թէ՝ օծը զոր զուր կը շերմացընէիր ինծի դէմի դէմ, առա անոր զիլի վրայ ձգուած է զրահաւորներու խարիսխներն։ Բայց վերը ծածկուած մնաց երկու քրյոր ազգերու կուրծքին տակ և Սան Ռէմյոյ մէջ միջը դուրս պիտի տար Վարչապետ Նիտուի, որ Գերագոյն խորհրդի նստաշըրջանին ուղարկի աճուրդի դրաւ Հայաստանի ազգաւութիւնը և անկախութիւնը և Թուրքին զնեց Հերակլէայի ածխահանքներու լորուցամաք հոդամասերէն Զնջին բաժին մը¹։

Ազատ և յառաջադէմ Խտալիսն, Գարիբաղիի և Մածծինիի և նմանների հայրենիքը, որ կը պարծէր հալածուածներու և ընկնուածներու պաշտպանն և ազատա-

1. Վասն զի հարուստ շերտերը և արդինարեր խաւերը արդէն աբրազաներ են Գաղղիանից և Եյլներն, և իրեն արտօնուած գետնին վրայ, զեռ շատ մը արտօնաւէրը կան, որոց չես գնուարամար զործ պիտի ունենայ Խտալական տէրութիւնը։

րարը հանդիսանալ, այնպիսի շվջելափառ քաղաքականութեան մը հետեւեցաւ, որ միայն նախատինը և ստուեր կը բերէ իւր փառաւոր անցեալին։ Փլորենտիոյ Ս. Խաչ Եկեղեցւոյն մէջ հանգչողներու քաջազանց շերիմներն, այլ ևս զիտալական ովին առ մեծամեծու չեն վառեր, այլ թուրքի հետ բարեկամ և բարերար կոչուելու տենդով կը փորձէ ի զոր Տըփուլոյ մէջ կրած պարտութիւնները և անարգանները մեղմել, անկարող լինելով վրէժ խնդրել Շարաշատի մէջ հազար թերսալիէրներ խողինողներէն, Հոմսի, Զանգուրի և այլ տեղեաց հրոսակախմբերէն, որոնց ամեն օր Խտալական դրօշը ոտնատակ կու տանցեսներու մէջ։

Ոչ, Խտալիս հետեւելով Նիտուի ուղղութեան կը սխալի, ինչպէս նաև Գաղղիա, թուրքը սիրաշահելու մէջ, թուրքը ոչ թէ Հայի թշնամին է, այլ հանուր մարդկութեան։ Թուրքի կրօնական մոլեւանդութիւնն է զինքն գերող կաշկանդող և անընդունակ զարգնութիւն բալաքարթիւթեան և զարգացման։ Թուրքի կրօնական հաստատութիւններն են որ փակչելով Ղուրանի նիթական հասկացողութեան կը պահնեն թուրքի հոգին, և կը մնայ մարդկան անասուն, որու բնազըզ երր զըրգուի կարմիր Սուլթան մը կամ երիտասարդ թուրքերը կը զառնան հրէշաւոր եղեննազորներ և ջարպարաններ։ Գաղափարական, աստուածային և ըրիստոնէական կրօնի հակունեայրը կը կազմեն իսլամական դաւանութեան պատմանդ ցեղերը, և բարբարութեան միջավայրէն դուրս չեն եներ։ Եթէ գտնուին զարգացած թուրքեր, անսնը ուղարատան մահմետականներ չեն։ Այս ընյթով և հասկացողութեամբ ատրիի հետ համակերպիլը, պատույ ձոռացում է և հաւասարութիւն ոչնչութեան, որով անկարելի պիտի ըլլայ համոզումով խաղաղել Արևելը և Հարաւային երկիրներն, Ալբրիկն, այլ միայն ուժով և օրէնքով զապէլ և զաստացնել, եթէ կարելի է ։ Մարդկութիւն և քաղաքակրթեալ աշխարհի պարտըն էր, զոնէ այս աշխարհաւեր

պատերազմէն վերջ, յառաջաւոր Ասիան մաքրել սրբել թուրք խուժանչն, պէտք էր միաբան վերականգնել ընկնուած ազգերը, որդեզրել զանոնց Ազգերու դաշնակցութեան ներքեւ, իսկ թուրքին թողու և սահմանափակիլ այն գաւառներու մէջ, որոնց հին բնակչութիւնը իսպառ ոչնչացեր են: Ասով միայն Եւրոպան կրնար ապահով և գոհ մալ թէ կնքած էր արդարն. և երկարառու խաղաղորդին: Մինչ երեք մեծ պետութիւններն ամեն մէկն ուղեց աւելի օգտուիլ և սիրաշահել զթուրքերը, այդ հակամարդկային մըցութեան մէջ, Հայաստանի լաւագոյն գաւառներն զլանով մեզի, նուէր մը կընէին Սուլթանին փոխանակ առանց վարձի գրաւած Միջագետքի, Պաղեստինոյ, Սիրիոյ և Հերակլէզի բարածուղի շահազործութեան: Զայս կ'ուզէ ակնարկել վասեմ. Նուպար Փաշան, «շատ մը խոստութիւնը որոնց եղած էին, մոռցուած կամ մէկ կողմ թողուած են. կը խոսափեն անոնց խօսք ընելէ, ՎԱԽԵՆԱԼՈՎ. ՈՐ ՉԵՆ ԿՐՆԱՐ ԿԱՏԱՐԵԼ ԶԱԽՈԽԻՔ»: Զե՞ն կրնար. ով հաւատաց: Դիւանագիտութեան լեցուն՝ Պետական վարիչներու բերնի մէջ կը շրջի հողմացոյցի պէս այն կողմը՝ ուսկից շահարեր հողմերը կը փչեն:

Եւրոպական բաղաբագիտութիւնը վէրդիի երեակայած կինն է, որ հողմավար փետուրի նման կը փոխէ միաբը և խօսքը: Մանուկ ազգ մը, ինչպէս Հայն է, օրուան երզը սովորած չէ զեռ: Հազիւ թէ իւր դարաւոր շղթայներէն ազատուած, Նալբանդեանի երգած մանուկն է, որ երկու ձեռքով պինդ գրկեց Ազատութիւն, Հայրենիքը, ՈՐ ԻՒԹ ՍԵՓԱԿԱՆ ԱՐԻՒՆՈՎ. Գնեծ և առաջին բարբառը զաշնակիցներէն սովորեցաւ և կրկնեց իւրաւունց, արդարութիւն, ազատութիւն: Բառեր, որնք կարմիր արիւնով ձեռն վրայ գրուեցան: Եւ բանի մօտեցաւ հաջուէյարդարութեան ժամանակը, երբ պէտք էր ճանաչցուէին Հայու դարաւոր և նուիրական իւրաւունցները Միջացեալ և Անկախ Ազատ Հայաստանի վրայ, ընդ հակառակն, դաշնա-

կիցներու հասարակական կարծիքն՝ պաշտօնական և ծանրակշիռ լրազիրներու միջցաւ զարձաւ մեր զէմ և սկ տառերով սպիտակ թղթի վրայ չխոճեցին զուզակշիռ մը ընել Հայի և թուրքին նշանակութեան միջն քաղաքակրթութեան և մարդկութեան բերած օգուտներուն մէջ և գտան որ Հայերն նուազ օգտակար եղած են մարդկութեան Եւրոպային կամ զաշնակիցներուն՝ քան թուրքերը: Խօրադրաբար կղերական թերթերէն ումանց այդ ուղղութեամբ մղեցին անողոց պայցըրը Հայ ազգի և Հայաստանի անկախութեան ի վկաս, և բոլորն ի միասին ունեցան իրենց աղիսաբեր ազգեցութիւնը մանաւանը Սան Ռէմոյ հաւաքուած Գերագոյն Խորհուրդին վրայ: Եղած որոշումն ոչ միայն կը դրէմ մարդարիութեան, այլ և զիւանազիտական սխալ մ'է: Թուրքի արթնցած ազգայնական ոգին ճնշել անկարելի է. անոնց չափէն աւելի ազատութիւն ձեռք բերին. Եէնիչ երիներու վերապրութեան կանխատեսել կուտայ: Պանթուրանիզմը կամ Համբաւամականութիւնը իւր յաջորդութիւնը ապահոված կրնայ համարել, եթէ Շիհա թաթար - Պարսիկներն որդեզրեն Երլատարդ թուրքերու սկըզբունքները: Եթէ ցարդ անոնց չյաջողեցան մասամբ մը իրենց զիւական ծրագրի մէջ, Եւրոպայ կը պարտի Հայ ազգի քաջութեան, անընկենի կամըին, ռազմիկ ոգտոյն: Այդ շատ լաւ զիւտեն Դաշնակիցներն, և ցաւալին այն է որ այսօր իրաւունց և արդարութիւն գործազրող Գերագոյն Խորհուրդը, գործակից կը զառնայ թուրքի զաւերուն Հայաստանը բնաշնջման պայմաններու մէջ զնելով:

*
* *

Դաշնակիցներու հոգեբանութիւնը բացատրելն զեռ կանուխ է, զրամայի վերջին արարուածը զեռ չէ խաղցուած: Առ այժմ Հզօրներն իրենց պարարտ բաժիններն ստանալին վերջ, իւրաւունք և արդարութիւն ստափականական հսկողութեան տակ դրին, ուստի անոր անունը կրկնելն անձրութիւն

կը պատճառէ և վնասարեր տկարներուն։ Վոսփորի կովը դեռ չէ ցամցած, ծծելու ժարաւը տոփեց երկու վարչապետներէն մէկը՝ պաշտպաննել Հայերէն և Յոյներէն հարստահարուած «խղճամիտ և ազնի» թուրքը. միւսը՝ արդարացնել գործուած զազանութիւնները դաշնակիցներու դէմ, և գեղերեսնել վատովի զաւանանութիւնը երախտաղբներու դէմ, փաստարաննելով Գերազոյն Ալեքնի մէջ թէ՛ «Քիչ մը շոգը, թիչ մը ծարաւը և անօթութիւնը, և ցիչ մ'ալ զիւական դրդումն՝ մղեցին զթուրքը Տնառն Խնկայի զիրկը»։ — Եւ այդ ասողն կոփերեսով, ժան Դ'Արքի ասպետական ցեղին սերունդ կը համարի զինքն։

Մենք Հայերս, ժամ է Լօյտ ձեօրնի
խօսքը ակնանջի օղ ըննենք, և լաւ մտածենք
անոր հետևանքները : Հասկանանց մեծ
քաղաքագիտի խորին խորհրդով ըսածք:
Ուրիշներ թոռքերը կը զինեն և կը բա-
ջալերեն, մենց զՁեզ կը զինենք ինքնա-
պաշտպանութեան համար: Գնացէք կոռե-
ցէք, ջարդուեցէք, մենց հանդիսատես
կ'ըլլանց ձեր շահատակութիւններուն, ով
որ դաշտի վրայ մաս կանգուն և յաղթող,
մենց պատրաստ ենք ճանաչելու անոր
իրաւունքները, անոր արդարութիւնը, ա-
նոր ազատ հայրենիքը:

ւագոյն է Հռոմէական առածին միա զնել և գործադրել. Si vis pacem, para bellum. — Եթէ կամիս զիազաղութիւն պատրաստեաց ի պատերազմ: Եթէ Լոյտ ձ'օրին այս մտցով թեւաղիր եղած է, շնորհակալութիւնան արժանի է: Պատրաստուինք որբան կրնանց, ոյժը պատկառանց կ'ազդէ, ոյժը կ'ապահովէ Կեանցը և յարաւան կ'ընէ խաղաղութիւնը:

Հայկական Հանրապետութիւնը զէնցի
ուժով յարգել տուաւ իւր ազգային իրա-
ւունքներն և հաշուութիւն կնցեց Թուրքի
հետ և խաղաղութեան ժողովն ճանաչեց
անոր գոյութիւնն, անկախութիւնն և ազա-
տութիւնը Բայց ասով Հայոց և Հայաս-
տանի դատը չվերջացաւ, երկու միլիոնի
չափ զոհուած հայերու արիւն՝ Գերազոյն
Խորհրդին, իւր բողոքն կ'ընէ Ազգային
Միացեալ պատուիրակութեանց բերնով և
յանոն արզարութեան և իրաւունքի՝ կը
պահանջէ իրենց բնակավայր Հայաստանի
ընիկ գաւառներու կցումն Հանրապետու-
թեան հողերու հետ, որպէս զի անոնց
սերունդին մացած բեկորները միացած
իրենց համարիւն եղբայրներու հետ, զան
բնակին և շնչնեն իրենց այրուած տներն,
մշակին խոպանացած արտերը և կազմուի
Միացած և Անկախ Ազատ Հայաստան մը:

Մենք շատ կրուեցանք, շատ աղիմ
թափեցինք և շատ յաղեցինք. Հայկա-
կան Հանրապետութեան դրօշի տակ զինուո-
րած Հայաստանի որդիքը, պատմութեան
մէջ յտեսնուած քաջագործութեամբ,

ՅԱՅԻՆ ԽՐԱԿՈՎ ԱՐԵՎ
ՊԱՀԱԿԱՆԱԿ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻ.

Դեռ զնհեր տալու պարտց չունինք
դիւանագիտական եղերեցութեանց. մէկ
Հայի կեանըը այժմ արժէ հազար: Խաղա-
ղութիւն կնքելու ժամանակ, հակասութիւն
մ'է հրապուրել զէնքով և արինով գրել
դաշնագրութիւնն երկու ազգերու միջն,
որոնց իրարու դրացի պիտի ապրին: Լա-

Միայն Տաճկահայաստանի պատապը՝
ման համար է որ, Հայերն՝ իրեւ դաշ-
եակից կը մտնեն միւս զիւաւոր Դաշնակից
պետութիւններու հետ կնքելու դաշն իրենց
և թուրքի միջն։

Աւատի Հաշտութեան դաշնապրի Զ.
զլուխն՝ որ ՀԱՅԱՍՏԱՆ Խորագիրը կը կրէ,
կարելի է իմանալ թէ Թուրքն և Դաշնա-
կիցներն ինչպէս կը հասկանան՝ Ազատ և
Վնակալ Հայաստանը: Յօդուած 88 կըսէ:
Թուրքիա ներկայ դաշնապրով կը ճանչնայ
Հայաստանը իրը ազատ և անկախ պետու-
թիւն, ինչպէս ճանչցած են դաշնակից
Պետութիւնները:

Եթէ ուրեմն դաշնակիցներու հաւանու-

թիւնը համապատասխան է թուրքի հասկացողութեան, դաւաճանութիւն մ'է իւրաւունքի և արդարութեան ։ Որովհետեւ թուրքն ազատ և անկախ Հայաստան կը ճանշնայ և ոչ ամրողական Ռուսա-Հայաստանը, որու տէրն է Հայկական Հանրապետութիւնը, որով Դաշնակից մեծ պետութիւններն ինչ վարձասորութիւն կուտանի իրենց դաշնակից Հայուն և Հայաստանին. ինչ վարձասորութիւն Արարայի վրայ ինկած քաջերուն, հարիւր յիսուն հազար զօրքին որ երկու տարի կոռւցեալ Ռուս բանակի մէջ և ժամանակ տուաւ Գաղղիոյ և Անգղիոյ սպառազինուելու. ինչ վարձասորութիւն Սարտարապատի, Ղարաբիլսու, Ջանգիեղուրի անմահ քաջերուն որ վեց ամիս հետո բոնցին թուրքի բանակն բազուի նաւթափութէն և Պարսկաստանի ճանապարհն։ Ոչինչ, քաղաքական և աշխարհագրական տեսակէտով։ Հինգ տարուան աշխարհաւեր պատերազմին՝ տնտեսականի և ընկերականի հետ ցուցազրած մեծ բարոյական մանակութիւնն է Սան Ռէմոյի մէջ զումարուած Գերազոյն խորհուրդի վերջին եղբակացութիւնները։

Եթէ մարդասէր Ամերիկան չլինէր, որ Բրեննոսի ծանր սուրբ նետեց պատերազմի նժարի մէջ և ընկեց Տէսուններու վիթխարի բանակներն, կորսուած էին Դաշնակիցներն, կորսուած պիտի ըլլար մեր փառապանձ Հանրապետութիւնն և միացեալ անկախ Հայաստանի մը մշտավառ տենչանը։ Բայց դաշնակիցներն շուտով մոտացան Մեծ մարդու արդինքը, չհանդուրժեցին Միացեալ - Նահանգներու ներկայութիւնն եւրոպայի գործերու որոշմանց մէջ. « այն որէն ի վեր, Կ'ուոչէ ասել Վասեմ. Փաշան, մեր Հայկական Հարցն ալ հաւանական լուծումներու շրջանակն վտարուեցաւ»։ Յուսանց որ Հայ ժողովուրդը միշտ երախտագէտ լինի բարերար Մեծ Ազգին. Սան Ռէմոյի Գերազոյն խորհուրդն յանձնելով Նախազահ Ռէլազին Հայաստանի սահմաններու վերջնական որոշումն, յուսով և երկուղով կը սպասենց որ Նա Դաշնակիցներէն պահանջէ Հայաստանի դրամն և

մատուցողներուն տայ Տիրոջ անակնունելի պատասխանը։

* *

Նիւթէ նիւթ անցնելով մոռացանք մեր քաջ թագաւորն Ալշակ Անյուշ բերդի մէջ։ Կըսեմ ձեզ Հայեր, Դրաստամատի պէս տիրասէր ըլլանց, բայց ոչ անձնամատն լինել երկուրին պէս։ Յայսերնիս չկտրենք դաշնակից Մեծ Գետութիւններու արդարադատութենէն և ակնկալից օգնութիւններէն։ Վասն զի եթէ քաղաքականութիւնը կը ստիպէ Վարչապետներն խոտորի արդարութիւն և իրաւունքի ուղիէն, սակայն Դաշնակից պետութեանց մէջ կան զեռ հազարաւոր ԲԱՐԻ ԵՒ ԱԶԽԻՒ ՀԱՊԻՆԾԲ, որոնց կարեկից են մեր հասած անրազդութեանց և գեռ յանուն իրենց հայրենեաց և ի պատիւ Մեծ ազգերուն՝ անոնց կը խոստանան միշտ իրենց օգնութիւնն և պաշտպանութիւնը, չուսահատինը, չվերաւորենց Ազգ մը և անոր արժանապատւութիւնը։

Աններելի սխալ մը գործած կ'ըլլայ Հայ ազգը, եթէ մորկ ընէ այն թելազորութեանց թէ այսուհետեւ պէտք չունինք Եւրոպական պետութեանց պաշտպանութեան և մենք Հայեր պէտք է միայնակ անօրինենց մեր բախտը ներկայ բաղաքական թօնրոհական վիճակին մէջ իտալիան ալ երբեմն, ստրկութեան մէջ տանջուելով, իրեն առած մ'ըրած էր Լ'Italia farà ձա այ Տիտալիան ինքնիրեն պիտի գործէ։ Այդ սկզբունքի սիալը ըմբռնեց կավուր, և Նապոլէոն Գի միջամտութեամբ միայն կարողացաւ զուրս վարել օտարը, գարաւոր թշնամին։ Մեզ Հայերի համար, նայելով մեր աշխարհագրական դիրքին և սակաւաւոր թիւին, հարկաւոր է մի ուժեղ Պետութեան աջակցութիւնը վերականգնելու ներու Հայաստանը հաստատուն և տևական հիմունքների վերայ։

Սակայն ընդ նմին վերակոչենք մեր մէջ մեր հայրենական ողին՝ Հայ ազգի զիտակ-ցութիւնը, որ իսկզբաննէ իւր խելքի և

բազկի վրայ յուսացած աներկիւղ դիմաւ-
գրաւեր է բռնաւորներու դէմ, անվեհեր
կոռուեր է գերակիր ուժերու դէմ, կեանքի
և մանու պայքարի մէջ՝ նախընտրեր է
փշուուկ քան խոնարիւլ և ստրկանալ
բռնաւորներու առջեւ, և անով յաջողեր է
պահել իւր դարաւոր գոյութիւնը։ Շատ հին
ազգերէ մինակ Հայ ազգն է որ քառասուն
դարերու աճումով և կեանքով այսօր
Հայաստանի կուրծցի վրայ կը բարձրանայ
հսկայ կաղնիի պէս՝ ինքնարուն ուժերով
հաստատուած սեփական արմատի վրայ։
Ազատ Մասիսն դարձեալ բերկրցցաւ նոր
Քաջերով։ Հայ բանակն կոռւեցաւ եռազոյն
զրոշի տակ և մեր դարաւոր թշնամիցմէն
վրէն առին, շատ ախոյեաններ յան-
դունդ զլորեցին «առ Արշակ քաջ»։

* *

Մառն՝ արմատովն է նաև...

Մառն իւր արմատովն՝ Ազգային գիտակ-
ցութիւնն է. Հայկական նոր սերունդն ալ
պէտք է համախմբուի Միութեան զաղա-
փարի շուրջն։ Միացեալ և Անկախ Հա-
յաստանի նկատմամբ եղած տարածայնու-
թիւններն ժամ է արդ բառնալու ի միջոյ,
որոնց կը զոսացնեն մեր ծառի աճումն և
ուռանցումն։ Երբ մէկն արմատներն ըրէ,
միւսն ջուրը Կորէ, երրորդ մը սոսոց զրած
որունը սողոցէ, չկայ յաջողութիւն և ոչ գործի
աւարտ։ Մենք իրաւունք կը զգանք զանգա-
տելու Դաշնակցիներէն թէ յուսախար ըրին
զմեզ. սակայն այս յուսախարութեան մէջ
մենք մեղաւորութիւնը կը ճանչնանք
արդեօք։ Այս կողմ, այն կողմ մեր սիսալ-
մունցներու մերկացումները կը լինին. ՞Իր-
քան նպատակայ արմար են անոնց մեր
զատին՝ ներկայ ժամանակի և պարագա-
ներու մէջ։ Անոնք խրամատներ կը քանան
մեր մարմնի մէջ, ուսկից թշնամին կօգ-
տուի պղառըներու այն մարդկանց միտքերը,

որոնց պատերազմի սկիզբէն և զինազա-
գարի առաջին ամիսներուն, աւելի լաւ
տրամադրեալ էին դէմ ի մեզ, բան այս
մի տարւոյ ընթացքում, երբ, իրը թէ
«Հշմարտուրեան» սիրով տանջուած ոգի-
ները, անխնայ և անվայել կերպով կը
դատեն և վարկարեկ կ'ընեն Հայ ազգին
և Հանրապետութեան ամենաազդեցիկ և
տաղանդաւոր Վարիչներն և Վարչապետ-
ները։

Հաշուէյարդարութեան ժամանակն՝ ա-
մեն ժամանակ է, ոչ ներկայիս։ Եթէ
կուզենց համոզուիլ լրազիւներու մերկա-
ցումներու անպատուզ ու վասակար հետա-
պնդութեան, բաւական է ի նկատի առնուլ
իտալիոյ ներքին աննախանձելի կացու-
թիւնը, որ հետեւանց մ'եղաւ կապորէտ-
ոյի Խորտակման պատճառներու ընտու-
թեանը. այն խրամատեց ազգային միու-
թիւնը, ջլատեց հայրենասիրութիւնը և
վարկարեկ ըրաւ Պաշտօնէտութիւններ, Պար-
տուած Գերմանիան իսկ պատասխանա-
տուններ քննելը վասակար կը համարի
իւր ներկայապէս ապրած ժամանակին։

Երբեմն խժական անուններ զմեզ անջա-
տեր էին Խուսահայ-Ճաճկանայ, Խուսը մի-
ջն եւս, Տաճիկն վատթարացցաւ, Թացինը
մենք Հայերս դէմ ընդ դէմ, իրը ջրի երկու
կաթիլներ. ճշմարիտ, անձնանուէր հայ-
րենասիրութեան ոգին, միութեան շունչ
մը, բաւական է միացնելու զանոնը ամ-
բողջութիւն մը կազմելու համար։ Հա-
յաստանը մերն է ասենց, մեր հայրենիքն
Հայոց աշխարհն է «ուր Հարթն են անդ
րնակեաւը ազգի տան թորգումայ»։ Ուստի
Հ. Ալիշանի հետ ասենք.

Ենթէ՛ Հայրենի, բովք իմ կենաց և խանդից
ի այլըն սիրուն ազատութեան ծագմանմէ,
Ցուսանն իր նախույն հզինակին հըսկայից՝
Ուստի եւ ազեզամք ու եւար զԾիստն դիւանէմ,
Հայոց զիս, Ուզիդ Հայկազնոց՝
ի լեռնադաշտն այն Հարանց։

ՄԵՐԱՆ ՇԻՐԱԿԱՑ

